Ողջունելով դեսպանի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հայտնեց նորանշանակ դեսպանին և շնորհավորեց նրան Արգենտինայի ազգային տոնի առիթով: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի ու Արգենտինայի միջև առկա ջերմ հարաբերությունների առիթով: Հայոց Հայրապետը ջերմությամբ վերհիշեց նաև 2004-ի մայիսին իր Հովվապետական այցը Արգենտինա:

Հանդիպմանը խոսվեց նաև Արգենտինայի հայ համայնքի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության և ժողովրդի կյանքում Եկեղեցու կարևոր առաքելության մասին:

* * *

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Վճռաբեկ դատարանի 10-ամյակի առիթով ընդունեց Վճռաբեկ դատարանի անդամներին և ԱՊՀ երկրներից Հայաստան ժամանած նույնանուն կառույցների ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը շնորհավորեց Հայաստանի դատական համակարգի ներկայացուցիչներին՝ Վճռաբեկ դատարանի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ: Վեհափառ Հայրապետը համառոտ ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, ապա անդրադարձավ օրենքի կրոնական ընկալմանը և աստվածադիր լինելու հանգամանքին:

* * *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Ալեքսանդրիայի և Աֆրիկայի պատվիրակության վարչական ղեկավար Սպիրիդոն Կամալակիսին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հայ և հույն ժողովուրդների միջև առկա ջերմ բարեկամությանը, ինչպես նաև Հայ Եկեղեցու և Ալեքսանդրիայի պատրիարքության հարաբերություններին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒԽՎ ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒԻՍ ՄԱՐԻ ԴԵ ՊՅՈՒՉԻՆ

Հուլիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լուիս Մարի դե Պյուչին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց պարոն դե Պյուչի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հաջողություն մաղթեց նրա առաքելությանը՝ նշելով, որ երկրում հասարակական լարվածության վերացումը բոլորի սպասումն է: Նորին Սրբությունն ընդգծեց, որ թե՛ իշխանության և թե՛ ընդդիմության ներկայացուցիչներն ու կողմնակիցները Հա-

յաստանյայց Եկեղեցու զավակներն են, և Հայ Եկեղեցուն մտահոգում է յուրաքանչյուր հայորդու ճակատագիրը:

ԵԽԽՎ նախագահը Վեհափառ Հայրապետին ներկայացնելով Հայաստան կատարած իր այցի նպատակները՝ առանձնակի կարևորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերը հասարակության մեջ հաշտարար մթնոլորտի ստեղծման գործում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին: Նորին Սրբությունը մասնավորապես մտահոգություն հայտնեց Ադրբեջանից հնչող ռազմատենչ հայտարարությունների առնչությամբ, որ վերջին շրջանում հաճախադեպ է դարձել նաև Ադրեբջանի հոգևոր առաջնորդի կողմից: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Ադրբեջանում հայոց հոգևոր ու մշակութային կոթողների նկատմամբ իրականացվող բարբարոսական քաղաքականությանը՝ մասնավորապես մատնանշելով Հին Ջուղայի խաչքարերի իսպառ ոչնչացումը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ